Վ. Ս. ՊԱՐՍԱՄԵԱՆ, «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԸ», «Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 1978, 184 էջ:

Նոր ժամանակներու պատմագրութեան ամենէն ծանօթ անուններէն մէկն է Փրոֆ. Վարդան Պարսամեան, որուն գիտական հետաքրքրութեան գլխաւոր առանցքը կը կազմէ 18–19–րդ դարեր ընդգրկող ժամանակաշրջանը: Հայ ժողովուրդի պատմութեան տուեալ ժամանակաշրջանին նուիրուած են անոր՝ «Ցարիզմի Գաղութային Քաղաքականութիւնը Հայաստանում» (Երեւան, 1940), «Հայ Ազատագրական Շարժումների Պատմութիւնից» (Երեւան, 1958), «Դեկաբրիստները Հայաստանում» (Երեւան, 1959), «Լեհահայերի Մասնակցութիւնը Դաւիթ–Բեկի Ապստամբութեանը» (Երեւան, 1962), եւ «Հայ Ժողովրդի Պատմութիւն, 1801–1917 թթ.» (Երեւան, 1967) մենագրութիւնները: Վերջինը՝ երրորդ հատորն է հայ ժողովուրդի պատմութեան նուիրուած չորսհատորեակին:

«Ռուսաստանը եւ Հայ Ժողովրդի Պատմական Բախտը» մենագրութիւնը՝ փաստական հարուստ նիւթերու վրայ կ'ուրուագծէ հայ-ռուսական պատմական կապերը 18–րդ դարու սկիզբէն մինչեւ 20–րդ դար, եւ այդ ժամանակաշրջանին մէջ հայ ազատագրական շարժումներուն անցած հանգրուանները, անոնց հիմնական գրուագներուն, պատմական նշանաւոր դէպքերուն ու դէմքերուն հետ:

Քաղաքական դէպքերու ու դէմքերու ուրուագծումին կողքին, մենագրութեան մէջ յատուկ ուշադրութեան կ'արժանանան նաեւ գաղութներու տնտեսական ու հասարակական գործունէութիւնները, ու անոնց բերած նպաստը հայ ժողովուրդի ազատագրական պայքարի հոլովոյթին. «18–րդ դարի երկրորդ կէսին Պետերբուրգի հայ գաղութը գարձել էր հայ–ռուսական քաղաքական յարաբերութիւնների հանդուցակէտ: Լազարեանները գտնուում էին այդ յարաբերութիւնների կեդրոնում, կարելի է ասել՝ գեկի մօտ: Առանց Լազարեանների՝ հայերին ու Հայաստանին վերաբերող գրեթէ ոչ մի հարց արքունիք չէր մտնում ու ընթացք չէր ստանում» (էջ 52), կը գրէ Փրոֆ. Պարսամեան:

Փրոֆ. Պարսամեանի ներկայ աշխատասիրութեան առանձնայատկութիւններէն մէկն ալ պէտք է նկատել՝ հայ ազատագրական պայքարի պատմութեան զուգընթաց զարգացող ու ձեւաւորուող քաղաքական մտածողութիւններուն ու արեւելումներուն ներկայացումը:

Հատորին մէջ հրատարակուած վաւերագիրներու եւ այլ նկարներու շարքին մէջ հետաքրքրական նորութիւն է հեղինակին կողմէ յայտնաբերուած Իսրայէլ Օրիի նկարը (գործ՝ Ա. Մաշինեանի):

«Ռուսաստանը եւ Հայ Ժողովրդի Պատմական Բախտը»՝ հեղինակին կողմէ նոր պատմագրութեան համար օգտաշատ ներդրում է:

Ե. Հ. Ռ.